

**ԵՐԿՐԱՑԻՋԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ՀԵՏԱԽՈՒՋՄԱՆ**, երկրակեղևի ուսումնասիրությունը ֆիզիկական մեթոդներով՝ օգտակար հանածոների որոնման և հետախուզման նպատակով: Ե. մ. հ. *երկրաֆիզիկայի* բաղկացուցիչ մասն են և հիմնված են Երկրի-բնական ու երկրակեղևում արհեստականորեն ստեղծված ֆիզիկական դաշտերի (ծանրություն ուժի, մագնիսական, էլեկտրական, ջերմային, առաձգական տատանումների և միջուկային ճառագայթման) հետազոտության վրա: Տիեզերքից, օդից, Երկրի մակերևույթում (ցամաքում և ծովում) և ստորգետնյա պայմաններում (հանքահորերում, հորատանցքերում) կատարվող չափումներից ստացված տվյալները օգտագործվում են բարենպաստ երկրաբանական կառուցվածքներ և հանքային մարմիններ հայտնաբերելու, դրանց հիմնական բնութագրերը որոշելու համար: Ե. մ. հ. հնարավորություն է ընձեռում ճիշտ ընտրելու հանքափորվածքների տեղը և արդյունավետ դարձնելու լեռնային ու հորատման աշխատանքները: Տարբերվում են գրավիչափական, մագնիսական, էլեկտրական, սեյսմիկ, երկրաջերմային և ռադիոչափական Ե. մ. հ.: էլեկտրական և սեյսմիկ հետախուզություններն ունեն



մեթոդների բազմաթիվ տարբերակներ.  
դիմադրությունների, բնական դաշտի,  
հարուցված բևեռացման (էլեկտրահետա-  
խուզություն հաստատուն հոսանքով), հա-  
վասարագծերի, ինտենսիվության, ին-  
դուկցիայի, ալիքային, գերերկար ալիք-  
ների, ռադիոկիպ (էլեկտրահետախուզու-  
թյուն փոփոխական հոսանքով), անդ-  
րադարձած և բեկված ալիքների (սեյս-  
մոհետախուզություն): Ժամանակակից Ե.  
մ. հ. տարվում են ֆիզիկամաթեմատիկա-  
կան հիմունքներով ստեղծված տեսության  
և բարձր ճշգրտության ապարատների  
օգնությամբ: Երկրաֆիզիկական չափում-  
ներից ստացված տվյալներ մշակելիս և  
մեկնաբանելիս կիրառվում են հաշվիչ  
մեքենաներ: